

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиς, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—5 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր տողատողին 10 կոպեկ.
Տ է լ է ֆ օ ն № 253.

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—Ներքին Տե-
ստութիւն.—Նախնի Մեղրից. Ներքին լուրեր.
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտաքին լուրեր.
ՀԵՌԱՅԻՐԱՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Աջակցեցէ, որ անեն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անցեալ մեր քաղաքական տեսութեան
մէջ մենք ասացինք, որ օսմանեան պե-
տութեան հոգիներ վրա հըղենք համար
նրի թեր կան թէ եւրոպական և թէ ա-
սիական մասերում:

Արդարեւ Մանիֆէստից չեն վերջա-
նում յուզմունքները և օսմանեան կառա-
վարութիւնը նոյն իսկ կարգադրել է ու-
ժեղացնել իր գործադրութիւնը Բալկա-
նեան թերակղզու գանազան կէտերում:
Վերջին ժամանակները ուղիւստ են երե-
ւան գալ բազմաթիւ փաստեր, որոնք
ցոյց են տալիս, որ յունական ազգաբնա-
կութիւնը դիտարկութիւն ունի նոր
բարեփոխումներ առաջացնելու, որպէս
զի կարողանայ յունական տարրի իրա-
ւունքները պարտաւորել այն շրջաննե-
րում, ուր մտնում են խոստացված
բարեփոխութիւնները: Թիւրքական
վարչութեան ներկայացուցիչները զեռ-
չին հաշտվում այն մտքի հետ, որ եւրո-
պական ժամդարմերին պէտք է զսպող
մի ոյժի գեր կատարէ այն երկրներում,
որոնք գտնվում են օսմանեան պետութեան
իրաւասութեան տակ: Ուստի և եւրոպա-
յի պատմիչները ընդունվել են առերես,
թամանակաւոր կերպով, մինչև հանգա-
մանները նորից նպաստաւոր պայման-
ներ ստեղծեն թիւրքական բացարձակ
վարչութեան համար:

Միւս կողմից մեծ մտադրաւորութիւն է
պատճառել թիւրքական կառավարութեան
ապստամբական այն շարժումը, որ ու-
ժեղացել է Արաբիայում, Նախի շրջա-
նում: Պէտք է նկատել, որ արաբական
յուզմունքները վերջին տասն տարիների
ընթացքում օրէցօր մեծանում և ճիւղա-
ւորվում են: Նախ նրանք կրում էին
մասնաւոր բնակչութիւն և վերաբերում
էին տեղական մի քանի հարստաւարու-
թեան դէպքերին. բայց վերջին տարիներ-
ում նրանք սկսեցին արմատներ գցել
ազգաբնակչութեան բոլոր խաւերում և
յուզմունքները ստացան տեղական ու
աւելի լուրջ նշանակութիւն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԱՅՑԵՔ, ՈՐ ԱՆԵՆ

I
Ով փորձել է գեղեցիկ տարածել կու-
տուրա, այսինքն երկրագործութեան, կաթնա-
տնայութեան, մեղրաբուծութեան, շերամա-
պահութեան նոր ու յարմար եղանակներ ու
գործիքներ մտնել այդպիսի այդ հասարակու-
թեան մէջ ընդհանուր ոյժ առաջ բերել հա-
մարմնավոր նրա հատիկ հատիկ կոպէսները
կովի և ոչխարի մի բուռ կաթն ու բուրբուր
մի քանի ֆունտ հացարդի սերմերն ու խո-
տերը և նման արդիւնքները աւելի շահաւէտ
կերպով գործադրելն ու արտադրելն և օ-
տոր ապրանքը էժանագին ներմուծելը, այդ
պէտք մարդուն միայն յայտնի են այն
աղբիւրները, որ առաջ են գալիս այդ
տեսակ ձեռնարկութիւնների ժամանակ ժողո-
վրդի կողմից: Դրա պատճառները շատ են.
եւ կը յիշեմ միայն երկուսը, որ յաղթահարել
համարեալ թէ անկարելի է:

Առաջին՝ գիւղական ժողովրդի ահաճու-
թիւնը դէպի նորութիւն: Այդ մասայի
տարբերաւոր դասակարգը, որ գիւղի «մեծա-
մեծ», «խաւարաւոր» և այլ մակերեսներով է
յարկընթաց, չէ սիրում նորութիւն. այդ շատ

Թիւրքիայի հայկական նահանգներում
կառավարութիւնը զբաղված է նոր ամ-
բարեփոխումներ կատարելու և իր գորա-
բանակները նոր եղանակով դասաւորելու
հոգսով: Ներքին բարեկարգութեան խն-
դիրները, որոնց մասին յայտարարված
էին իրազեկներում, դեռ չեն իրագործ-
վում և այդպիսով խաղաղութիւնը չէ
հաստատուում յուզված երկրի մասերում:

Թիւրքիան առանձնապէս ուշք է դարձ-
րել այժմ իր նաւատորմի վրա և աշխա-
տում է ուժեղացնել նրան նոր զինուորա-
կան նաւերով: Քաղաքական մասնաւոր
գանազան ենթադրութիւններ է անում
նաւատորմի ուժեղացման մերձաւոր նը-
պատակների առիթով: Մի քանիսը կար-
ծում են, որ ուժեղ նաւատորմը հարկա-
ւոր է յունական ապագայ շարժումները
զսպելու համար, միւսները ենթադրում
են, որ Թիւրքիան իրան նախապատրաս-
տում է ապահովելու իր ամբողջ ընդհա-
րուածներից միջազգային խոշոր բարեփո-
խութիւնների դէպքում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵՂՐԻՑ

Միւսից վերջին կարգադրութիւնը մեր
կողմերում էլ շատ ուրախութիւն պատճառեց:
Վերջապէս այդ հարցը, որ շատ անգամ էր
մատուցի մէջ տեղ գրաւում, արժարժում, ի-
րական հոգի վրա դրվեց: Այսուհետեւ առեւ-
նայողը պարտաւոր է նոյն իսկ նշանակու-
թեամբ ունենալ բժշկական վկայական, որ ինքը
լիովին առողջ է:

Միայն պէտք է ցուել, որ այդ կարգա-
դրութիւնը էլ ուղիւստ հրատարակվեց: Եթէ տասը
կամ տասն և հինգ տարի առաջ լինէր, այն
ժամանակ մենք չէինք լինի մի այսպիսի
դժբախտ դրութեան մէջ: Թէ որքան փառաց
պանդխտութիւնը մեզ Մեղրիքի և իր շրջա-
կայքին, պէտք է մարդ անձամբ ինքը պատէ
նրեքին խաւերը, աչքով տեսնէ այսանուումը,
այն ծիւրումը, այն տանջանքը, որ կրում են
շատ ու շատ ընտանիքներ և չարիք որդէ:

Պանդխտութիւնը վերջերս մեզ մեծ հակա-
յական չափեր ընդունեց, շարժել անաշուտա-
րէնքը միմեանց յաղորդելու: Միջոցների սղու-
թիւնը, հոգի պահպանութիւնը բնից տարաւ օ-
տար երկրները շատ քաղաքներ, մարդկանց մեծ
քանակութիւն՝ այստեղ աշխատելու: Քիչ չէին

պարզ է. չէ որ ընդհանրապէս մարդս երբէք
ձեռք չէ վերցնում այն սովորութիւնից, թէ
տեսնում է նրա անպէտք լինելը, որը 40—50
տարի շարունակ իւրացրած լինելով՝ բնաւ-
ւորութիւն է դարձել. այստեղ հարկ է աւե-
լացնել և նախաձեռն. ախարաբալի համար ան-
տանելի է տեսնել իրանից փորելին, շերտիկայ
լաճինը գործի գլխին կանգնած: Եւ քանի որ
գիւղերում վճող և գործադիր մարմին են
կազմում այդ մեծամեծները, հետևապէս նոր,
լաւ բան չէ կարող մուտք գործել այդ տեղե-
րում ժողովրդի՝ իր ջանքերով:

Սովորյալ վերաբերեալ մի իրական դէպք
պատմեմ. սեպտեմբերի սկզբներին ինտերու-
տօր Պ. Մ. Սողոմոնեանը կաթնատնտեսու-
թեան գործիքներն առած շրջում էր Շիրակի
գիւղերը ժողովրդին գործնական կերպով ցոյց
տալու կաթից իւղ ու պահի պատրաստելու
կատարելագործված նոր միջոցները. ի միջի
այլոց եկաւ նաև Արթիկ գիւղը: Եւ նա հա-
մարեալ ամեն տեղ հասնում էր իր նպատակին,
այսինքն նրա փորձերը անխառն կերպով
պարզում էին հին գիւղական միջոցով կաթից
իւղ ու պահի պատրաստելու կատարեալ
անպէտքութիւնն ու փաստաւորութիւնը և նոր
միջոցի առաւելութիւնները, որոնք շատ շատ
են, բայց գլխաւորն այն է, որ այդ միջոցը
նախ՝ ասես հեշտ է, երկրորդ՝ կատարեալ մաւու-
րալիւծ է քաղիւս և երրորդ՝ ասես է քաղիւս.

այսպիսիները, որոնք վերադարձան բոլորովին
բայաւալած, կազմաւորված: Քաղաքի շուկայ
և գեղի կենտրոնը իր մշտական դրոշմն էր դրել
այդ ողորմելիները վրա, որոնք զուրկ լինե-
լով գիտակցութիւնից, ընկան այդ սարսափելի
վիճի մէջ: Դրանք այնքան անխոհեմ, անբա-
րեկիճ և անբարոյական գտնվեցան, որ ի-
րանց տանջանքից մաս տուեցին և խեղճ,
միամիտ գեղջիկուհուն: Այդ կրքոտ պարտիները,
որ սովոր էին քաղաքի անառականոցներում
գիշերը լուսացնել, վերադառնալով հայրենիք՝
իրանց կրքին ենթարկեցին շատ միամիտ արա-
բացիներ, ամուսնաւորվ նրանց հետ:

Չանցած մի կամ երկու ամիս, այլ ևս չէր կա-
րել տեսնել նախկին առողջ գեղջիկուհուն, որի
դէմքին առաջ միայն ժպիտն էր փայլում, երբ
չը կար նրան համար դարդ ցաւ ևս ինչ լի
յուրերով էր փափագում ամուսնական կեանքը,
նա անհամբերութեամբ էր սպասում իր երեակա-
յած երջանիկ կեանքին: Բայց չանցած երկու
ամիս նրա դէմքին դալկութիւն տրեց, այլ
ևս չը կար նրա նախկին ժպիտը, արդէն
մարել էին նրա նախկին վառվառն ա-
չերը: Խեղճ վարակված էր: Վատ ցաւը իր
խոր արմատներն էր ձգել մատաղահաս մարմ-
նի մէջ և օրէցօր քայքայում էր նրան: Միզ
լիւծ, որ միայն ունի 200 տուն բնակիչ,
տանտնակներ կարելի է մասնացոյց անել ու-
րոնք զոհ են պանդխտութեան արտադրած
չարիքին: Եթէ ներկայ կարգադրութիւնը
կրկնում եւ, լինէր տասը տարի առաջ, այն
ժամանակ մենք այսքան փառ չէինք կրել, և
մեր գիւղերը այսպէս չէին ալլաւորվել, մա-
նաւանդ զեռ շատ վաղուց է, որ հարցը մա-
մուլի մէջ էր դրված: Բայց՝ լաւ է ուշ, քան
երբէք:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունվարի 15-ին հովիտի կառավարչապետի
դիւանը, որ նախկին կառավարչապետի հետ
գնացել էր Պետերբուրգ, «ԵՅԱՅԱ»-ի ստացած
հեռագրի համաձայն, մեկնել է Պետերբուրգից
հովիտ:

Պետերբուրգի անցքերի մասին «Русск. Вѣд.»
լրագիրը հետեւեալ մանրամասնութիւններն է
հաղորդում, որոնք մեր ընթերցողներին ար-
դէն ծանօթ են պաշտօնական հեռագրից:

—Յունվարի 9-ին մայրաքաղաքի դանադան
մասերում տեղի ունեցան բանւորների խմբա-
ւորութիւններ, որոնց պատճառով գործերը
իւրը չէ կորչում պանրի, թանի կամ շիշուկի
հետ և ոչ պանրի լուղի, թանի ու շիշուկի
հետ, ամեն մի տարր լուծվում ու բաժանվում
է առանձին: Եւ շատ շատերը համոզվե-
ցին, որ նոր միջոցը ամեն կողմից առաւել է,
ի միջի այլոց և մայրս. բայց երբ նրան ա-
ռաւարկեցինք գործ ածել այդ գործիքները,
նա մերժեց ոչ այն պատճառով, որ 60 ռուբլի
պիտի տար մեքենային, քանի որ մեքենայի
փողը ուրիշ էր տալու, այլ նրա համար, որ
մեքենան զիջել-պիջել բաներ շատ ունի, գլխա-
ցաւանք է. բայց, ընթերցող, եթէ իմանաս,
թէ ինչպիսի դժուարութեամբ է նա իւղ ու
պանրի պատրաստում իր հին միջոցով, ուղղա-
կի կապշիս այդ առարկութեան վրա: Դրա
պատճառն ինչ է.—անշուշտ սովորութիւնը:
Այն, հին անպէտք սովորութիւնը թողնել
նշանակում է փոխվել, այլ մարդ դառնալ, որ
շատ քիչներն է անշուշտ, որովհետեւ շատ քի-
չներն են կամքի տէր:

Երանի թէ միայն տգէտները անտարբեր
լինէին դէպի զաւ ճարտարներ. ցաւն այն
է, որ շատ թէ քիչ ուսման հոտն
առած, շփված մարդիկ էլ նոյն թմբեց-
նշանակում է փոխվել, այլ մարդ դառնալ, որ
սկզբնական դպրոցներն աւարտած անձինք,
որոնք գիւղի հարուստ դասակարգն են կազ-
մում սակայն դրանց մայրերն ու հարսները

միջամտեցին: Սոսում են մեծ քանակութեամբ
սպանվածների և վերաւորների մասին: Ամսի
10-ին ժամը 1 1/2-ին: Փողոցներում խաղա-
ղութիւն է: Նեվսկի պրոսպեկտի մոտակայքի
փողոցներում, պրոսպեկտի վրա և Պետերբուր-
գի հողում բանւորները խմբերով անց ու
դարձ են անում: Չորս համարեալ չէ երևում,
բացի Պալատական հրապարակից և Վասիլևան
կղզուց. միւս մասերում միայն շրջիկ պահակ-
ներ կան: Ժամը 12-ի մոտերն սկսեցին մաք-
րել Պալատի հրապարակը ժողովրդից: Պալատի
մօտի գետափով կարգվել երթեկներ: Նեվսկու
վրա մի տան լուսամուտների և դրան ապա-
կիները կոտորտել են: Վասիլևան կղզում և
ուրիշ շատ տեղերում սկսել են ներքնայա-
կերի պատուհաններին տախտակներ կաշնել:

—Ժամը 4 և 50 րոպէին: Նահանգական դա-
տարանի IV քաղաքացիական բաժնի մոտ
ընդհատեց նիստը, որովհետեւ 10 հոգի եր-
դուեալ հաւատարմատարներ խնդրեցին յե-
տաճգել զբաղմունքները, հարկաւոր եղած ա-
պահովութեան բացակայութեան պատճառով:
Բոլոր երդուեալ-հաւատարմատարները մտա-
դիր են գործերը դադարեցնել:—Ժամը 6 և 45
րոպէին: Շատ տեղերում տեղի ունեցան ազ-
գաբնակչութեան գանազան մասերի ժողովներ,
զիւստօրաբար ինտելիգենցիայի կողմից: Ա-
մենաբաղձամարդ ժողովը տեղի ունեցաւ Ա-
զատ Տնտեսական Ընկերութեան մէջ. մասնակ-
ցում էին 600-ից աւելի մարդ: Նեվսկու վրա
մի խումբ ինտելիգենտ մարդիկ ստիպում էին
խանութները փակել, իբր նրան համակարգի
դէպի եղած շարժումը: Երեկոյան, երբ էլեք-
տրականութիւնը հանգաւ, Նեվսկու անագին
մասի վրա, որ լցված էր ամբողջով, դարձու-
րանք և ձգվող առաջացան: Բոլորը ձգտում
էին դէպի կողմակի փողոցները: «Դոստինի
զվորում» փորձ եղաւ խանութները թալանե-
լու:—Երեկոյան ժամը 7-ին: Չայնաւորներից
40 հոգի վճռել են Դոմայի առաւելիկայ նիս-
տին, չորեքշաբթի օրը, առաւարկութիւն անել,
միջնորդել կառավարութեան առաջ պաշտպանել
ազգաբնակչութիւնը անկարգութիւնների հե-
տեւանքներից:—Ժամը 10-ին երեկոյան: Փո-
ղոցները դատարկ են, բացի Վոզնեսենսկի
պրոսպեկտից և Սալովի փողոցից, ուր շարժ-
վում են ամբողջ անագին խմբեր, չը նայելով
լիակատար մթնութեանը: Ամեն կողմ երևում
են բազմաթիւ շրջող պահակներ: Բնաստան-
ները և խանութները փակված են:

ՇՈՒՄ

Ամսի 15-ին կայացաւ քաղաքային ծայնա-
ւորների մասնաւոր խորհրդակցութիւնը, որի
յիշված միանգամայն փաստաւոր թէ աշխա-
տաւորին և թէ նրա աշխատանքը փչացնող
գործիքն են դատապարտվում: Արթիկի 350
տուն բնակիչներից, բացի գործակալ քահա-
նայից, միայն մի հոգի հետաքրքրվեց և պ-
իւստրուկտորին հրաւերեց տուն փորձել կա-
տարելու. և այդ մարդը երբ չորս գլուխ ոչ-
խարի տէր է. ապա հիւր էին 100—200 գլուխ
ոչխարի: 10—15 գլուխ կովի տէրերը, որոնք
նիւթական միջոց էլ ունեն, այդ գործը հասկա-
ցող մարդիկ էլ են. սա ամօթ և նախատինք է:
Մի գեներիկ գիւղացի աւելի հետաքրքրել է դե-
պի նորութիւնը, քան կրթված երիտասարդը.
սա մահացու մեղք է. այս վերջինս ևս սովոր-
ւում է իր կարողութիւնը, թէ մտաւոր և
թէ նիւթական. բայց ինչպէս ճարպիկ է
20—50 տակտով մուրճակ գրելու մէջ.
ինչպէս ճարտարութեամբ հաշուում է տո-
կոսի տոկոսը: Բայց չէ որ նոյն օգու-
տը կարելի է ստանալ և այլ, բայց աղ-
նիւ ու հանրօգուտ միջոցով—դրացուղ ընդ
հետ առաջ տանելով, և ոչ թէ միմիայն սե-
փական շահով զբաղված: Նրան խուզել ու
զգել, աւուր հացի կարօտ դարձն լ. սա ան-
խղճութիւն է:

(Կը շարունակվի)

ժամանակ ընկնելու հետևանքով երկու հարցերը. 1-ին՝ ձևով տոնի Պորտ-Արտուրի պաշտպաններին (առաջարկվել էր Բ. Վեյսլովսկու և 2) միջոցներ գտնել արագացնելու այն գործերի դատարանում, որոնք պիտի ներկայացվեն քաղաքային դատարանի ընդունմանը. Առաջին հարցի վերաբերմամբ վճարվեց մաղթանք կատարել դատարանի գահին՝ ձևով սպանված զինվորներին և օֆիցերներին համար իսկ տոնելը յետաձգել մինչև պատերազմի վերջը: Երկրորդ հարցի վերաբերմամբ որոշվեց շարաֆական երկու նիստ գումարել, շորեքաբլի և շարաֆ օրերը, որոշելու ներկայացվելով գործերը:

Դեկտեմբերի 26-ին Պետերբուրգի Կազանական տաճարում միտոբայիտ Անտոնին հոգեհանգիստ կատարելով Պորտ-Արտուրի պաշտպանության ժամանակ սպանված զինվորականների համար, մի քարոզ խոսեց, որի մէջ ի թիւս այլոց, ասաց. «Տօնի աստղը ծագեց մեզ համար ոչ թէ ուրախութեան փայլով, այլ քարացնող վառ խաւարով... Դեռ ես միտում եմ թաղված քաղաքի միացորդները, իսկ նրա Ուսկն սարը, ուր ծածանում էր մեր խաչանիշը դոշակը, այսուհետեւ մի յուշարձան է, որի վրա Աստուծու մատը գրեց մի քանիսի մեղքերը և միւսների նահատակութիւնը: Մեր հայրենիքի համար զոհված արժանի նահատակներ, համարեա մի տարի դիմացան թշնամու ճշմանը, ցերեկ ու գիշերը հանգիստ չը ճանաչեցին հերոսական, գերմարդկային ուղիղական շնորհքով, բայցած, զրկանքներով լի, հիւանդ, զարհուրանքներով լի և ուժասպառ վիճակում: Առիթի նման դուրս էին գալիս նրանք թշնամու դէմ, բայց նրանց ժանիքներն ու ճիւղները թոյլ էին պաշտպանութեան համար, և նրանք դարձան մորթիլիւ ոչխարներ: Այդպիսով՝ ձերանք հնձեցիք այն, ինչ ցանկ էինք ամառը: Տիեզերքի առաջ մենք դուրս եկանք մեր գործերով: Անտեսանելի աշի հարուածը անխուսափելի է դարձնում վրէժը: 50 տարի սրանից առաջ Աստուածային խաղաղութիւն հարուածեց մեզ ծովից, որպէս զի փափկէին մեր սրտերը, և երկիրը շարժեց մի կողմ մարմնական ստրկութեան շղթաները: Ծովից եկաւ Աստուծու բարկութիւնն այժմ էլ նրա համար, որ փշովին այն օրերից միացորդները—դու ստրկութիւնը...»

Երէկ, ամսի 17-ին, քաղաքային դատարանի նիստը ընտրեց առաջիկայ քառամսեակի համար քաղաքային վարչութեան անդամ էլի պ. Տ. Էնֆիանսեյն:

Պարկովի նահանգի աղանդաւորները նորից խնդր են ներկայացրել ներքին գործերի մի-նիստութեանը, որ դադարեցվի նրանց դէմ եկած կրօնական հալածանքը: Նոյն տեսակի խնդր ներկայացրել էին նրանք 1903 թ. մարտ ամսին նախկին մինիստր Փոն-Պլեյէին:

Յունվարի 4-ին Ստաւրոպոլի առևտրական կուրում կայացել է զգեստաւորված երեկոյթ: Բոլոր կատարիները, ինչպէս հաղորդում է «Сѣвер. Кавказъ» լրագիրը, բոլորն էլ վերաբերում էին օրվա հարցերին: «Կանանց կուսակցութեան» առանձնապէս դուր եկաւ ժողովրդին խաղաղութեան հրեշտակը: Նա հագել էր սպիտակ զգեստ, սպիտակ թիւնով, թիւնին և զլինին դափնու ճիւղեր: Կրծքի վրա կար մի արձանագրութիւն. «Երեկոյ խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»: Կրծքից և մէջքից ձախ ընկած ժապաւեններ վրա գրված էին. մէկի վրա—«Ազգերի եղբայրութիւն. համամարդկային խաղաղութիւն, ընդհանուր զինաթափութիւն: Vive la fraternité: Արդարադատութիւն, ժողովրդական ներկայացուցչութիւն: Vive l'egalité: Միւսի վրա—«Մութի ազատութիւն. գործադուլների ազատութիւն. ընկերութեանների ազատութիւն. «Vive la liberte»: Մի ուրիշ դիմակ ներկայացնում էր մամուլը: Նա ներկայացված էր իւր մի կին, գլխին փշէ պսակ և մազազրութիւն. «Գարուն»: Վերին կայ մի ժապաւեն, վրան գրված «Մա-մուլ», իսկ վզովը մի սև օղակ, վրան գրված—«Եղեղութեան»: Կրծքին և մէջքին երկու բռնցք. մէկը—«Վստահութիւն» մակագրութեամբ, միւսը ժապաւենի վրա գրված—«Сынъ Отечества»: Միւս ժապաւենների վրա գրված էին «Наша Жизнь», «Наша Дни», «Русская Правда», «Право», ներքեւում այդ լրագիրների այն համարները, որոնց համար նրանք դադարեցվել կամ ուրիշ պատիժներ են ստացել, և այն ամսաթիւեր, երբ նրանք լոյս են տեսել: Այդ դիմակն էլ ֆուրոր հանց: «Դժբաղդաւոր» ե-

րեկոյթի լաւ տպագրութիւնը խանգարվեց, որովհետեւ ուստիկանութիւնը եկաւ և դրանց այդ երկու զինաստիւնը:

Պետերբուրգի «Тиф.» լրագիրը հաղորդում է, որ Կ. Պ. Պորեզովսկին ծանր հիւանդացել է, ոչ ոքի չէ ընդունում:

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Յունվարի 8-ին Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսը, թարգման ունենալով տեղիս եկեղեցական կալուածների կառավարութեան փոխ-նախագահ Ն. Մ. Տէրեանին, պատիւ ունեցաւ ներկայանալու Նորին Կայսերական Բարձրութիւն Սերգի Ալեքսանդրովիչին Нескучный Садъ-ի պալատում: Ընդունելութիւնը շատ սիրալիք էր: Առաջնորդին դիմաւորեց ընդունարանում կրօնական տեսչի և տարաւ մի առանձին սենեակ, ուր ինչպէս 15 րոպէ սպասելուց հինգ րոպէից յետոյ վերադառնալով, հրաւիրեց մերձաւոր դահլիճ. այստեղ ինքն Մեծ Իշխանը ընդ առաջ եկաւ սրբազանին և նրանք միմեանց աջը հաճութեամբ սկսեցին խօսակցել: Մեծ Իշխանը զգացված կերպով յայտնեց իր գոհունակութիւնը սրբազան Ներսէսին, նրա այցելութեան համար, մանրամասնորէն հարցրեց նրա թեմի մասին, քանի վանքեր կան այնտեղ, բազմաթիւ է արդեօք նրա միաբանութիւնը, ինքը սրբազանը որտեղ է բնակվում մշտական: Առաջնորդի պատասխանները ուշադրութեամբ լսեցին յետոյ, յարեց, տեսն է արդեօք նա մայրաքաղաքիս վրաւոր սրբութիւնները, զանազան աշիք ընկող հաստատութիւնները և այլն: Արքեպիսկոպոսը թարգմանի միջնորդութեամբ պատասխանեց, թէ առաջին անգամ ժամանելով Մոսկվա, նա իր համար սեպակ պարտականութիւն համարեց նախ և առաջ ներկայանալ Նորին Կայսերական Բարձրութեան, ապա քանի մի պաշտօնական անձանց այցելելուց յետոյ, մի առ մի զննել պատմական քաղաքի բոլոր հուշարձանները, սրբութիւնները և հաստատութիւնները: Կրկին և կրկին անկեղծ շնորհակալութիւններ արտայայտելով առաջնորդին, Մեծ Իշխանը արձակեց նրան: Այնուհետեւ Ներսէս եպիսկոպոսը կառքով գնաց և իր այցելածները թողեց միտոբայիտի, կուսակալ Կիրիտի, քաղաքագլուխ իշխան Գոլիցինի մօտ: Միւս օրը, յունվարի 9-ին, քաղաքագլուխը եկաւ սրբազանի մօտ փոխայցելութեան, և տանը չը գտնելով նրան, թողեց իր այցելածը. միտոբայիտը ներկայումս Պետերբուրգում է: Նոյն օրը ժամի 5 1/2-ին տեղիս հայ հասարակութիւնը Դրեզդեն հիւրանոցում հանդիսաւոր ճաշ տուեց իր առաջնորդին: Ծաղիւ ուրախ անցաւ. բազմաթիւ կեցցէներ իմրոյցին, երբ էլ միմեանք յարատեւութեան համար բաժակ առաջարկեց, առաջնորդը, հոգեւոր դասը և հանգիստականները յոտնկայա «Էլմիածին» շարականը երգեցին:

ԱՄԱԿԱՅԻՑ հաղորդում են. «Ամսի 11-ի գիշերը, ժամը 2-ին զգալի կերպով երկրաշարժ տեղի ունեցաւ. տատանումը հիւսիս արեւելից դէպի հարաւ արեւմուտք էր: Ելի նորից վերաբարդվեց շարաքաղը 1899 թ. դեկտեմբերի 19-ը իր աղետալի հետեանքներով ազգաբնակչութեան յիշողութեան մէջ: Այս տարի մեզանում ծանր ձմեռներից մէկն է. ձիւնը խոր շերտեր ծածկել են սար ու ձոր: Առաւօտեանները և երեկոյեանները մօտ 18° Ր. սառնամանիք է լինում»:

ԵՆԻԱՄԻՑ յունվարի 15-ին մեզ գրում են. «Բոլոր պատճառով Բագուի և Հաջիկաբուլի միջև դադարեցրած լինելով մարդատար և ապրանքատար գնացքների շարժումը—անա երկրորդ օրն է, որ այստեղից դէպի Բագու երկաթուղային տոմսակ չէ վաճառվում:—Ղարաբաղի, Սիւնիանի և Ղափանի կողմերից այստեղ են խմբվել սակաւաթիւ հայ գեղջուկներ, որոնք գնում են դէպի Բագու, աշխատելու տեսչանքով վառված... Մարդ յուզվում է, տեսնելով դրանց մէջ մէջքից կորացած ծեւունիներ, հազիւ 15-ամսայ ֆիդիբայէն առողջ և զուարթ դէմքով պատանիներ... Ո՞վ գիտէ, ի՞նչ սարսափելի ապագայ է սպասվում Բագուում—գիւղական այդ ծաղիկներին...» բայց և այնպէս նրանք գնում են, անողորմ կերպով—կարծիք ստիպում է նրանց գնալու—բարոյապէս և ֆիզիկապէս մաշվելու, ապա վերադառնալու...»

ԴԵՐԲԵՆՏԻՑ մեզ գրում են. «Յունվարի 8-ին մեր քաղաքային ինքնավարութեան ձայնաւոր-

ները ընդհանուր ժողովը, առաջարկութեամբ քաղաքագլուխ Ղասուր-Բէկ Հայդարովի, Դերեան քաղաքի պատուաւոր քաղաքացի ընտրեց Կովկասի նախկին կառավարչապետ իշխան Գոլիցինին: Առաջարկութիւնն ընդունվեց միաձայն»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յրահայտ Կովքի միքսստիպան անկու-մը: Արդէն հեռագիրներից գիտենք, որ Կովքի միքստիպանը հրաժարական տուեց: Ֆրանսիայի քաղաքական կենտրոնի շարժման հետեւողները լաւ գիտեն, որ յանձին Կովքի Ֆրանսիան զոհվում է այժմ մի քաղաքի, եռանդուն և շխտակ միքստիպանի, որի նմանը գուցէ նա չունեցաւ. երբեք հանրապետութեան ամբողջ գոյութեան ժամանակ, եթէ չը հաշուենք հանգուցեալ Վալդէ-Լուսատին: Կովքին աշողվեց ազատել Ֆրանսիայի կղերականութեան սոսկալի հիգիւրայից և ազատել երկիրը կրօնական միաբանութիւնների պատճառած անհամար ֆրանսիայի թէ՛ 70 տարեկան, աղքատ Կովքը, վերջիվերջոյ, ընկաւ կղերականների հարուածի տակ, բայց նա կարողացաւ ինքն ևս այնպիսի հզօր հարուած հասցնել կղերականութեան, որ Ֆրանսիայի արդէն ընդմիջող ազատված պետք է համարէ իրան այդ հզօր թշնամուց: Այն այն հրաժարագիրը, որ Կովքը ներկայացրեց հանրապետութեան նախագահ պ. Լուրէին:

«Ոչ առանց խորին ցաւի ես ինձ ստիպված եմ տեսնում հրաժարվել սոցիալական ընթերցանների այն ծրագրի լիակատար իրագործումից, որ պաշտօնապէս հաւանութիւն էր ստացել պարլամենտի և սենատի հանրապետական մեծամասնութիւնից: Սակայն այդ մեծամասնութեան թուանշանը վերջին բուէարկութեան ժամանակ պարլամենտում այնքան նուազեց, որ ես այլ ևս յոյս չեմ կարող ունենալ այդ ծրագրի աշող իրագործման մասին: Ահա 18 ամիս է ես հանդիսանում եմ նպատակաւոր անհաւանքի փառաբանութեան և կղերական ու ազգայնական ատելութեան: Փառասէնները միշտ անհաւանութիւն էին գտնում կղերականներից և ամեն միջոց գործադրում էին բաժան բաժան անել հանրապետական մեծամասնութեանը: Այդ աշողվեց նրանց վերջի վերջոյ: Ես բայց առ քայլ մաքառում եմ բոլոր մանուկներին դէմ, առանց յոգնելու և առանց թուլութեան: Եթէ ես զեկավարվէի միայն սեփական զգացումով, ես կը շարունակէի կռիւն և ես հաւատարմ եմ, որ չը նայելով հանրապետական մեծամասնութեան առանձնակի ներկայացուցիչներ իմ անհամար, հանրապետական Ֆրանսիան բաժնուր կը լինէր: Սակայն դժուար չէ նախատեսել, որ ինձ սպասում է մտանց փորձամանութեան հանդիպել որ և է միջադէպի առթիւով պարլամենտի նիստերից մէկում: Այդ կարող էր այնպէս մեկնաբանվել, թէ մեր ծրագիրը դատապարտված է: Այդ պատճառով ես որոշեցի հրաժարական տալ պարլամենտի վերջին բուէարկութիւնից յետոյ, որը մի անգամ ևս հանդիսաւորապէս հաւանութիւն տուեց իմ մի-նիստութեան ծրագրին: Հանրապետական մեծամասնութեան այդ բուէարկութիւնը մնում է իր ոյժի մէջ և ապագայ միքստիպանի հաւատարմ»:

—Մակեդոնիայի մէջ հետզհետէ կազմակերպվում են յունական հրոսակաւորներ, որոնց օգնում են թիւրք իշխանութիւնները, որպէս զի այդ հրոսակաւորները ոչնչացնեն բուլղարական չէտաները Մակեդոնիայում:

ՄՇԱԿԻ ՀԵՌՈՒԳԻՐՆԵՐԸ

ՈՒՍՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

16 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ: «Շարքի Ռուս» թուրքերէն լրագրի հրատարակչին թոյլատրված է տեղափոխել լրագրի հրատարակութիւնը Թիֆլիսից Բագու:

ՎԱՇԵՆԳՏՕՆ, 14 յունվարի: Այստեղ միշտ վախենում էին, որ խաղաղութեան պայմանները կարող են անախորժ հետեւնքներ ունենալ չէզոք պետութիւնների համար: Հէյնի յայտագիրը այդ հնարաւորութեան առաջին առեւտրական ձեռք առած միջոցներից մէկն է: Վաշինգտոնի կարիքները կարծում է, որ Հէյնի յայտագիրը իրապէս հասաւ իր նպատակին և հող պատերազմից խաղաղ բանակցութիւնների համար: Վաշինգտոնում այն կարծիքն է տիրապետում, որ որպէս զի խաղաղութիւնը հաստատուն լինի, նա պէտք է կապված լինի այնպիսի պայմաններով, որոնք կ'զսացնեն ոչ միայն Ռուսաստանին և Եւրոպային, այլ և ամբողջ աշխարհը:

ՊԱՐԻՉ, 14 յունվարի: Պատգամաւորների ժողով: Միքստիպանի պրօքուրատի ընթերցանութեան ժամանակ Բուլլիէ յայտնեց, որ Ֆրանսիան կը շարունակէ արտաքին քաղաքականութիւնը, որը, շնորհիւ պարլամենտի

լուսաւոր անակցութեան և ֆրանսիական ազգի ակներեւ հաւանականութեան, եռանդով գործադրելով մեր դաշնակցութիւնը և նպատակաւորութեամբ օգուտ քաղելով բարեկամութիւնից, ամբարցրեց Ֆրանսիայի դրութիւնը: Կառավարութիւնը դիմում է բոլոր հանրապետականների ազատ և օրինական անակցութեան: Հանգստութեան, ընթերցանների և պրօգրէսի նպատակը իրագործելու համար: Սօցիալիստները աշխատում են խլացնել Բուլլիէի ձայնը աղաղակներով այն ժամանակ, երբ ամբողջ պատգամաւորների ժողովը ծախանաւում էր, մասնաւոր երբ խօսքը դաշնակցութեան էր վերաբերում: Ընդհանուր քաղաքականութիւնը քննելու ժամանակ սօցիալիստ Ալլան բողոք յայտնեց Պետերբուրգում տեղի ունեցած դէպքերի դէմ. այն ժամանակ Դեկաւսէ բարձրացաւ ամբիօնը, եռանդով բողոքելով յանուն Ֆրանսիայի բարի համբաւի հետօրի խօսքերի դէմ: Նրա ձառն ընդունվեց միաբանող-չոյններով: Սօցիալիստները խտրօքէն ընդհատում են միքստիպան. բարձրանում է սաստիկ աղաղակ: Յուզված Դեկաւսէ յայտնում է, որ Ռուսաստանի հասցէին ուղղած վերաւորանքները ծանր հետեւեց իւրեանց միաբանութեան: Ժօրէնը, սօցիալիստների կուսակցութեան պարագլուխը, խիստ լեզուով առաւելում է այդ խօսքերի դէմ: Դեկաւսէ պատասխանում է. «Չը պէտք է մոռանալ, որ Ռուսաստանը մեր դաշնակիցն է, և այդ դաշնակցութիւնը մեզ հնարաւորութիւն տուեց պաշտպանել մեր շահերը և աշողութեամբ գլուխ բերել միջազգային յարաբերութիւնների քաղաքականութիւնը: Դեկաւսէ իշխում է ամբիօնից սաստիկ յուզմունքի մէջ, ուղեկցված երկաթաուս օվաքիայով:

ՎԱՄԻՎՈՍՏՕԿ, 15 յունվարի: (Սեփ. Թըրքակցից): Կուսակ և Ալեքսան ֆիւրման Զիֆուռուարկից մի շոգնաւ վերցնելու իր այն ծառայողներին, որոնք Պորտ-Արտուրում էին մինչև վերջին օրը:

ՊԱՐԻՉ, 14 յունվարի: Յանձնաժողովը հարցուփորձեւ իրարկեց երկու հետեւեալ վկաներին: Լոմբոն նախընթաց վկանների ցուցմունքների նման ցուցմունքներ տուեց: Անգլիական պատուար Միտչէր, որը գտնվում էր Սվիֆտս նաւի վրա, յայտնեց, որ ոչ մի օտարազգի նաւ չը տեսաւ ոչ հրաձգութիւնից առաջ, ոչ էլ նրանից յետոյ, բայց աւելացրեց, որ մոթէն էր և այդ պատճառով նա չէ կարող տեսել, թէ արդեօք 3/4 մղոնից աւելի հեռաւորութեան վրա չէր գտնվում մի որ և է օտարազգի նաւ առանց լապտերի: Հետեւեալ վկայ Բրուս չը տեսաւ ոչ մի օտարազգի նաւ, բայց կէս մղոն հեռաւորութեան վրա նկատեց մի նաւ, որը առեւտրական նաւի տեսքն ունէր:

Վիկտոր-Էմմանուէլ թագաւորը հրաժեշտի ունկնդրութեան ընդունեց իշխան Ուրուսովին: «Առաւարկէն» շոգնաւը եկաւ այսօր: Ստեսէլին դիմաւորեցին «Դիանա» կրէյսերի հրամանատարը, Նոյնպէս և Ժովապետ Բալի և Ժովիլէր: Նաւահանգստում երիտասարդ աղջիկները ծաղիկներ մատուցին տիկին Ստեսէլին, որը, ըստ երեկոյթին, զգացված էր:

Կ. ՊՈԼԻՍ, 15 յունվարի: Եմէնում բռնկված ապստամբութիւնը արագութեամբ տարածվում ամբողջ Արաբիայում: Իրիլը և Բ. Դուռը սաստիկ անհանգստութեան մէջ են: Սուլթանը անձամբ ղեկավարում է ապստամբների դէմ ուղղած ձեռնարկութիւններին:

Պատրաստված է պայմանագիր 1,000,000 (?) Ֆրանկ փոխառութիւն կապելու Ֆրանսիական մի խումբ իրաւագէտների հետ և Կրէզօի գործարանի թրքաթիւնների գնելու համար: Սպասվում է սուլթանի իրադէն այդ պայմանագիրը ստորագրելու համար: Թիւրքաց ոստիկանութիւնը Սայօնիլի յունական մի բանակում, այդպէս անուանված միտիլինեան, գտաւ այնտեղ թագաւորած մօտ հարիւր հրացաններ և փամփուշտներ, որոնք նշանակված էին յունական չէտաների համար:

ՄՕՍԿՎԱ, 15 յունվարի: Երեկոյեան ժամանեց փոխ ծովապետ Սպիրիդով:

Այսօր հասան 186 հիւանդ և վերաւոր զինւորներ, նրանք թուով գտնվում են 15 օֆիցերներ և բժիշկներ:

16 յունվարի

ՕԴԵՍՍԱ, 15 յունվարի: Կամաւոր նաւատորմի «Մարատով» շոգնաւը յունվարի վերջը ուղևորվում է Սարատով: Ստեսէլին և Պորտ-Արտուրից նրա հետ վերադառողներին ընդունելու համար:

ԿՈՒՐՍԿ: Նահանգական զեմստովի ժողովը 5000 ր. որոշեց Եւրոպայի փոխադրել պորտ-արտուրեան գերի հերոսների համար:

